«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ուշադրության կենտրոնացվածությունը դասապրոցեսին

Հետազոտող ուսուցիչ՝ Կարինե Այվազյան
անուն, ազգանուն

Արմավիր քաղաքի թիվ 8 հիմնական դպրոց
դպրոց

Մենթոր ուսուցիչ Շուշան Վարդանյան
անուն, ազգանուն

ԱՐՄԱՎԻՐ- 2022

ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՍԱՊՐՈՑԵՍԻՆ

Բովանդակություն

Նախաբան.....3-4

Գրականության ակնարկ…….....5-10

Գործնական համատեքստ և հետազոտական ընթացք.....11-13

Ամփոփում/եզրակացություն/.....14-15

Օգտագործած գրականություն.....16

Ներածություն

Մարդու ուշադրության որևէ տեսակ բնութագրելիս պետք է նկարագրել նրա մի շարք հիմնական առանձնահատկություններ. կենտրոնացումը, բաշխումը, ծավալը, լարվածությունը, կայունությունը, շեղումը, որոշ պատկերացում պետք է ունենալ նաև ուշադրության բնորոշ խանգարումների մասին: Ուշադրության կենտրոնացման բարձր աստիճանը մտավոր, հատկապես ստեղծագործական աշխատանքում շոշափելի արդյունքների հասնելու հիմնական պայմաններից մեկն է: Արդյունավետ աշխատանքը պահանջում է լռություն. մեկուսացում, հրաժարում զգայական հաճույքների մեծամասնությունից:

Ուշագրության բաշխման պայմաններում ընկալվող առարկաների և գործողությունների գիտակցվածության աստիճանը տարբեր I. Օրինակ, մանկավարժի նոր դասը պատմելիս որոշ ժամանակահատվածում կարող է առավել հստակորեն գիտակցել իր պատմածի բովանդակությունը, քանի ղեռ դասարանում ամեն ինչ կարգին է, գիտակցական ուշադրության այդպիսի անհավասարաչափ բաշխման վիճակը կարող է պահպանվել: Բայց ահա աշակերտներից որևէ մեկն անթույլատրելի գործողություններ է կատարում և ուսուցչի գիտակցության կենտրոնում հայտնվում է դասարանը, այդ աշակերտը, այն գործողությունները. որոնք անհրաժեշտ են աշակերտին կարգի հրավիրելու համար: Այս օրինակը ցույց է տալիս, որ ուշադրության բաշխումը դինամիկ երևույթ է, ժամանակի ընթացքում այն փոփոխվում է, աշակերտ սովորող հարաբերություններում: Այս ամենը նպաստում է ուշադրության կենտրոնացմանն ու մտավոր աշխատանքի արդյունավետության բարձրացմանը: [1]

Ուշադրության կեյնտրոնացումը կարևոր է և սովորողին, և ուսուցչին:

Ուշադրության կենտրոնացումը չափազանց կարևոր է, երբ սովորողը դժվարանում է կենտրոնանալ դասապրոցեսին և չհասկանալով դասը չի յուրացնում այն:

[1] Ա. բերտնպ չ աջ յ ան, Հոգեբանու թ յ ան հիմու նքներ, Երևան 1997/ էջ 113-114/

Հետազոտությունս հենց կապված է այն խնդրին, որին առընչվում եմ թե ես, թե սովորողը, այն է՝ ուշադրության կենտրոնացվածություն: Ինձ միշտ թվացել է, որ սովորողին չես կարող կամ գրեթե անհնար է ինչ-որ բան սովորեցնել, երբ նա դա չի ցանկանում: Ուստի իմ խնդիրն էր հետաքրքրել, մոտիվացնել սովորողին:

Ուսուցման կազմակերպման պահանջները տարբեր են, անհրաժեշտ է հետաքրքրություն առաջացնել լուծվող խնդիրների նկատմամբ, ցույց տալ, բացատրել դրանց կարևորությունն ու օգտակարությունը, հմտությանը տիրապետելու գիտակցական դիրքորոշում ձևավորել, խրախուսել ճիշտ գործողությունները:

Շատ օգտակար է, որ սովորողը դասերը/ հանձնարարությունները հստակ պլանավորի և կազմի թեմատիկ ժամանակացույց, այնուհետ՝ ստույգ հետևի այդ ժամանակացույցին:

Բոլորին հանդիպող այս խնդիրը խորքային ուսումնասիրման կարիք ունի:

Հետազոտության նպատակը՝

- Բացահայտել դպրոցականների ուշադրության պակասի նախադրյալները :
- ուսումնասիրել խնդիրը համապատասխան գրականության մեջ
- ուսումնասիրել ուշադրությունը զարգացնող մեթոդներ
- նպաստել համագործակցային մեթոդների, հմտությունների զարգացմանը, կատարելագործմանը, անձնային որակների զարգացմանը, ուսման որակի բարձրացմանը

Հետազոտական փուլերը

- Հետազոտությունն իրականացումը նպատակով, մեթոդիկաների ընտրություն
- Փորձարարական հետազոտության իրականացում
- Ստացված արդյունքների գրաֆիկական վերլուծություն
- Հետազոտության արդյունքների ամփոփում

Գրականության ակնարկ

Նոբելյան մրցանակի դափնեկիր Հերբերտ Սայմոնը շրջանառության մեջ է դրել «ուշադրության տնտեսություն» արտահայտությունը: Ժամանակակից կրթության մեծագույն խնդիրներից մեկն այն է, որ աշակերտների ուշադրությունը գրավված է տարբեր բիզնես ինդուստրիաների, գործունեության տեսակների կողմից: Եվ այդ մրցակցության մեջ կրթությունը պարտվողի դերում է: Մարդկային ապրելակերպում ընդունված է, որ ի տարբերություն չափահասների՝ երեխաները ոչնչով զբաղված չեն: Հետևաբար՝ նրանք պետք է պարապեն, սովորեն: Այսօր երեխաների կյանքին բիզնես ինդուստրիաների ակտիվ միջամտության արդյունքում աշակերտներն այլևս պարապ չեն: Նրանք զբաղված են ֆուտբոլային հանդիպումներ, սերիալներ դիտելով ու տարատեսակ խաղերով: Աշակերտներին բավականաչափ զբաղեցնում են նաև սոցիալական ցանցերը: Մի խոսքով՝ սովորելու ժամանակ շատ քիչ է մնում: Որպեսզի սովորելու գործընթացը հնարավոր լինի, կրթության համակարգը պետք է փորձի գրավել աշակերտների ուշադրությունը: Այդ նպատակով անհրաժեշտ է գտնել ուսուցման այնպիսի մեթոդներ, որոնք ոչ միայն ցանկալի ու հետաքրքիր կլինեն սովորողների համար, այլև կունենան ուսուցողական, ճանաչողական նշանակություն և միաժամանակ կխթանեն աշակերտների ստեղծագործական միտքը: Սակայն մեթոդի ընտրությունը չի կարող լիարժեք լուծել ուսուցման արդյունավետությունը, եթե բացակայում է սովորողի ուշադրությունը, հետաքրքրասիրությունը, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է գտնել այն գործիքակազմը, որը կկիրառվի դասի տարբեր փուլերում՝ ըստ սովորողների առանձնահատկությունների: Այսպիսով՝ սովորելը հնարավոր դարձնելու առաջին քայլը ուշադրության կենտրոնացումն է: Երբ աշակերտը կենտրոնացնում է ուշադրությունը, ուսուցանվող նյութը տեղափոխվում է աշխատանքային կամ կարճաժամկետ հիշողության մեջ: Մարդու կարճաժամկետ հիշողության հնարավորությունները սահմանափակ են, այսինքն՝ մարդը չի կարող միանգամից շատ բան սովորել:[2]

[2] Ուսուցման պրոյեկտներ / Ա. Հաչատրյան.- Եր.: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020.- 9-10 էջ:

Ուսումնասիրելով տարբեր ուսումնական հնարներ, մեթոդներ և արդիականացնելով դասը, պետք է ներգրավել սովորողին դասապրոցեսին իր պատրաստակամությամբ:

Ըստ Վ. Պ. Սիմոնովի «Դասը ուսուցչի կազմակերպչական, ուսումնադաստիարակչական գործունեության և աշակերտների ուսումնաճանաչողական գործունեության միավորման համակարգ է՝ ուղղված կրթադաստիարակչական ընդհանուր խնդիրների լուծմանը և սովորողների զարգացմանն ու ձևավորման»: Դասը ուսուցչի ստեղծագործությունն է, և դասի արդյունավետությունը պայմանավորված է նրանով, թե որքանով է դասի նպատակը իրականացվում: Երբ դժվարությունների ենք բախվում և պրակտիկայում թերությունների ենք հանդիպում, այդ ժամանակ մենք մեզ պատասխանատվություն ենք ստանձնում ուսուցման համար և փորձում պլանավորել բարելավման ուղիներ: Ուսումնասիրելով մի շարք գրականություն, կարդալով և հիշելով մեր մանկավարժների ոսկի մտքերը, ուսուցման մեջ կարևորեցի ուշադրությունը կենտրոնացնող նոր արդյունավետ մեթոդների կիրառությունը:

Հաշվի առնելով սովորողների, հատկապես փոքր տարիքի, ուշադրության համեմատաբար արագ հոգնածությունը, Ուշինսկին խորհուրդ է տալիս փոխել աշխատանքի մոտեցումը և կիրառել մեթոդների բազմազանություն: Մեծ նշանակություն պետք է տալ երեխաների ինքնուրույն աշխատելու ունակության զարգացմանը, նաև դասապրոցեսների ընթացքում ուսուցիչը երեխաներին սովորեցնի և հմտացնի անկախ աշխատանքի ճիշտ մեթոդներին, ըստ իր կարողության աստիճանի և շահագրգռվածության: Կարևոր է տեսողական ընկալման զարգացումը, նրանով օժտվածները առանձնանում են իրենց ինքնատիպությամբ և զարգացվածությամբ: Ուշինսկի արժեքավոր ուղեցույցներ է տալիս, թե ինչպես օգտագործել երեխաների ուշադրությունը ուսման ընթացքում: Ուշինսկին մեծ նշանակություն է տվել հստակության սկզբունքին. «Երեխան մտածում է ձևերի, գույների, հնչյունների մեջ, ընդհանրապես ...», հետևաբար, երեխաների համար տեսողական ուսուցման անհրաժեշտությունը, «որը հիմնված է ոչ թե վերացական գաղափարների և բառերի, այլ երեխայի կողմից անմիջականորեն ընկալվող կոնկրետ պատկերների վրա», - գրել է նա:

Ուշինսկին մանրամասնորեն մշակել է երեխաների մեջ ընդհանուր գաղափարների և հասկացությունների կրթության մեթոդիկա՝ տեսողականից , խոսքի զարգացման հետ միաժամանակ երեխաների մտածողության, ուշադրության զարգացման մեթոդաբանություն: Փաստորեն, երբ սովորողը մտածում է, ուշադրությունը կենտրոնացնում է լուծվող խնդրի վրա, որպեսզի բաց չթողնի ոչ մի մանրամասնություն: Ուշադրությունը մտքերին տալիս է այնպիսի ուղղություն, որը տանում է խնդրի ճիշտ լուծմանը: Ուշադրությունը փոխկապակցված է նաև խոսքի հետ: Ընդ որում, խոսքն է օգնում կազմակերպել ուշադրությունը: Ստացվում է, որ ուշադրությունը «հագեցնում է» սովորողի ճանաչողությունը: Ուշադրության պակաս ունեցող սովորողները սովորաբար լինում են գերակտիվ, անկառավարելի, անկազմակերպ են, անուշադիր, դժվար են ենթարկվում կանոններին, շատախոսում են և շեղվում, մի առաջադրանքից մյուսին անցնելիս, որը բացասաբար է անդրադառնում զարգացման, առաջադիմության վրա: Վերոնշյալ դժվարություններն արտացոլվում են նրանց շփման և հաղորդակցման ոլորտում՝ առաջ բերելով խնդիրներ միջանձնային հարաբերություններում: Այս երեխաները նաև իրենց անցանկալի վարքի պատճառով, անընդհատ խնդիրներ են առաջացնում, և հիմնականում չեն ընդունվում դասընկերների կողմից, որից հետո ամենադժվարը, պարզել, թե ո՞րն է անցանկալի վարքի դրսևորման աղբյուրը, դրանք կարող են լինել ընտանեկան կոնֆլիկտների, երեխայի առողջական խնդիրների, համացանցային կախվածության և այլնի պատճառով: [3]

Եվ հաշվի առնելով նման սովորողի ուժեղ կողմերը աշխատել կենտրոնացնել նրանց դասին անհատական մոտեցումներով, կարևորել համագործակցային ուսուցումը: Համագործակցային մեթոդները մեծ ներուժ ունեն աշակերտակենտրոն ուսուցում կազմակերպելու համար, աշակերտին մասնակից դարձնելով գիտելիքի ձեռքբերմանը:

Համագործակցային մեթոդներից տարբերակված ուսուցումը թույլ է տալիս ուսումնական պրոցեսը կազմակերպել՝ հաշվի առնելով անձի անհատական առանձնահատկությունները:

Այն ապահովում է բոլոր աշակերտների կողմից կրթության բովանդակության

[3] К.Д. Ушинский – http://www.edufacts.ru/lefabs-508-2.html

յուրացումը: Այդ տիպի կրթության կազմակերպման դեպքում սովորողների յուրաքանչյուր խումբ, որոնք ունեն նման անհատական առանձնահատկություններ, գնում են իրենց ճանապարհով: Տարբերակված ուսուցման պայմաններում ուսուցման պրոցեսը մաքսիմալ ձևով մոտեցվում է երեխաների ճանաչողական պահանջմունքներին և անհատական առանձնահատկություններին: Տարբերակումը բնորոշվում է սովորողների այնպիսի խմբերի ստեղծումով, որտեղ գործունեության նպատակը, բովանդակությունը, մեթոդները, ձևերն ու արդյունքները տարբերվում են:

Ուսուցման գործընթացում ուսումնական քարտերի օգտագործումը աշակերտների մոտիվացիան բարձրացնող և արդյունավետ ուսումնական միջոց են: Դրանց կիրառությունը հնարավորություն է ընձեռում էլ ավելի արդյունավետ ընդգրկելու սովորողներին ուսումնական ակտիվության մեջ՝ առաջադրելով նրանցից յուրաքանչյուրի կարողություններին համապատասխան աշխատանք:

Ուսուցման գործընթացում ուսումնական քարտերի առաջադրանքները հնարավոր է վերաբերեն ցանկացած ուսումնական հարցի: Կարևոր է, որ քարտերում տեղ գտած հանձնարարությունները համապատասխանեն տվյալ դասարանի մակարդակին, ուսումնական նպատակին և ակտիվությանը:

Այսինքն ուսումնական քարտ կազմելիս պետք է հաշվի առնել այն, թե՝

-ո՞ր մակարդակի հմտություններ ու կարողություններ ունեցող աշակերտի համար է նախատեսված,

-ինչպիսի՞ն պետք է լինի բարդության աստիճանը,

-քանի՞ առաջադրանք պետք է ներառի ուսումնական քարտը,

-ի՞նչ տեսակի պատասխան է պահանջելու նշված առաջադրանքը:

Ուսումնական քարտերը հրաշալի միջոց են ուսուցման տարբերակման /դիֆերենցիայի/ համար: Ուսուցիչը կարող է քարտերի օգտագործումն աշակերտների համար դարձնել ուսումնական առօրյայի մաս: Աշակերտները քարտային առաջադրանքները հաճախ գերադասում են դասագրքում եղած

առաջադրանքներից, քանի որ քարտի վրա հիմնականում մեկ առաջադրանք է տրված: Ըստ իրենց ցանկության և կարողության նրանք կարող են լուծել ճիշտ այնքան քարտերի առաջադրանքներ, որքան իրենց անհրաժեշտ է որևէ ունակության մեջ հմտանալու համար: Ուսումնական քարտերի առաջադրանքները կարող են նպատակաուղղված լինել թեմայի յուրացմանը, բացթողումների լրացմանը կամ էլ՝ սովորողի առաջընթացին: Քարտերով առաջադրանք կարելի է տալ որպես տնային աշխատանք այն աշակերտներին, ովքեր ունեն տվյալ ուսումնական նյութը կրկնելու և ամրապնդելու, տվյալ թեմայի շրջանակներում ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու կարիք: Ուսուցիչը կարող է կազմել ուսումնական քարտերի այնպիսի հավաքածու, որը նպատակաուղղված է զարգացնելու աշակերտի ստեղծագործական ունակությունը: Այդ առաջադրանքները պետք է այնպիսի հարցեր ընդգրկեն, որ աշակերտը բազմակողմանի ուսումնասիրություն կատարի: Քարտային աշխատանքը պետք է միատարր հարցեր չպարունակի, որպեսզի ժամանակն իզուր չվատնվի:

Կարևոր հանգամանք է, որ ուսուցիչը չմիջամտի քարտի ընտրությանը՝ չտարբերակի աշակերտներին ուժեղների և թույլերի, այլ պետք է թույլ տալ, որ աշակերտն ըստ իր ցանկության ընտրի և կատարի իր կարողությանը համապատասխան կամ իրեն հետաքրքրող առաջադրանքը:[4]

Ներկայումս համագործակցային ուսուցումը լայն տարածում ունի սկանդինավյան երկրներում և ԱՄՆ-ում:

Համագործակցային ուսուցման կարևորագույն ձեռքբերումներն են

- անձի զարգացումը և անհատականության ձևավորումը.
- հոգեբանական և ֆիզիկական առողջության ապահովումը.
- սթրեսի հաղթահարումը.
- շրջապատողների հետ առողջ փոխհարաբերությունների կառուցումը:

Դասի բոլոր փուլերում պիտի ապահովվեն համագործակցային ուսուցման հետևյալ տարրերը՝

- դրական փոխկախվածություն.

К.Д. Ушинский – http://www.edufacts.ru/lefabs-508-2.html

- դեմ առ դեմ փոխազդեցություն.
- անհատական հաշվետվություն և պատասխանատվություն.
- միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ.
- խմբային գործընթաց/ մշակում.
- փոխներգործուն կամ ինտերակտիվ առաջադրանք:

Գործնական համատեքստ և հետազոտական ընթացք

<u>Հետազոտության վայրը</u> –Արմավիրի թիվ 8 հ /դ

<u>Հետազոտվող անձանց քանակը՝ 33 սովորող</u>

<u>Հետազոտվող անձանց տարիքը՝ 7Բ-րդ դասարան</u>

<u>Ուսումնասիրման նպատակը</u> –ուշադրության կենտրոնացվածության բացակայություն

Հետազոտության մեթոդները

- Հարցում
- Թեստավորում

<u>Մեթոդիկաների նկարագրություն</u>

Հետազոտությունս պատկերացնում էի մի դասարանում, որտեղ խնդիրները բազմազան են, դասարանի սովորողների մեծ քանակություն, թույլ սովորող աշակերտների առկայություն, անկարգ կարգապահություն, ուշադրության պակաս:

7-րդԲ դասարանում մշտապես են եղել դասալսումները, և իմ փորձից ելնելով կնկարագրեմ ակտիվ դասերից մեկը: Սովորողները երբևէ չեն ազդվել ուսուցչի ներկայությունից, ելնելով այդ հանգամանքից՝ լինել ավելի կենտրոնացված, ուշադիր: Ուշադրությունը միշտ փորձում էի խաղերի միջոցով, հատկապես «սատանայի վկա» հնարի: Այս դեպքում միտումնավոր սխալ բանաձև էի ասում, այն էլ այնպիսի, որ վստահ էի իրենց իմացած նյութի շրջանակում էր, շատ պարզ, որպեսզի ստուգեի, թե որքան ուշադիր է դասարանն ինձ լսում:

Եվ ի զարմանս ինձ, միայն նույն սովորողներն էին ինձ լսում և նույնիսկ արագ արձագանքում իմ սխալը, իսկ մեր դասալսողին հետաքրքրում էր թե ինչու էի ես սխալվում : Նոր նյութը հաղորդելուց հետո, որոշեցի պարզել, թե ով է հասկացել դասը և ով ոչ, կիրառել եմ «ամփոփել 3 կողպեք 1 բանալի»- հնարը, երեք կարևոր բառ, 2 արտահայտություն և մեկ կարևոր գաղափար-նախադասություն, որը կտանեին իրենց հետ:

Քանի որ սովորողները մշտապես անուշադիր էին, հաճախ փորձում էի հասկանալ թե որն է անուշադրության պակասի շարժառիթը:

Դասի ավարտին սովորողներին բաժանում էի թերթիկներ՝ հարցադրումներով, անկեղծ պատասխան ակնկալելով և իհարկե՝ անանուն գրառումով: Իմ հարցերն էին.

1. Ինչի՞ մասին էին մտածում դասի ընթացքում
2. Տանը ինչով եմ զբաղվում ազատ ժամանակ

Այս երկու պարզ հարցերի անկեղծ պատասխանից և դիտարկումներից հետո ես կհասկանայի, թե ինչն է նրանց ուշադրությունը շեղում և որոնք կլինեն հավանական լուծման ուղիները, ինչ մեթոդներ և հնարներ կօգտագործեմ դասի արդյունավետ նպատակին հասնելու համար: Հարցադրումներից ելնելով պարզեցի սովորողների ուշադրության պակասի նախադրյալները, այն է՝

- համակարգչային խաղեր
- հոգնածություն,
- խաղերի ցանկություն

Վերլուծության արդյունքում փորձում էի փնտրել թերությունները շտկելու, կատարելագործելու ուղիներ :

Փնտրում էի այնպիսի մեթոդներ, որն ավելի հետաքրքրասիրություն կմտցնի, և նրանք, որ տուն գնալու ցանկություն են ունենում, մասնակցեն դասին սիրով:

Դասի ընթացքում օգտագործում էի մի քանի մեթոդ, որը կօգներ նրանց դասի ժամանակ ավելի ուշադիր լինել, այն է համագործակցային ուսուցման «**Տարբերակված ուսուցում**» մեթոդը ուսումնական քարտերի օգտագործումով:

Ուսումնական քարտերը պետք է կազմել պարզ: Դրանցում տեղ գտած առաջադրանքի պահանջը պետք է հասկանալի լինի աշակերտի համար: Քարտերի տեսքն ու կառուցվածքը ևս պետք է գրավիչ լինեն՝ աշակերտներին ոգևորեն դեպի հիմնախնդիրները լուծելու, խորհելու, հարցեր առաջադրելու:

Տարբերակման այս եղանակը նպաստում է ուսման դժվարություններ կամ սահմանափակ կարողություններ ունեցող աշակերտների ինտեգրմանը: Աշակերտներն ընդգրկվում են խմբերում կամ ըստ իրենց ընդունակությունների, կամ նախասիրությունների:

Քանի որ խմբերի անդամներն ինքնուրույն են աշխատում, անհրաժեշտություն չկա ստեղծելու փոքր (3–5 անդամից բաղկացած) խմբեր: Յուրաքանչյուր աշակերտ իր առաջադրանքը կատարում է ինքնուրույն, մասամբ անհատական մոտեցմամբ:

Արդյունավետ համագործակցության հիմքում ընկած է աշխատանքի հավասար բաժանումը և փոխադարձ պատասխանատվությունը: Դրան կարելի է հասնել խմբի առանձին անդամներին որոշակի դեր/առաջադրանք տալով:

Վերջնարդյունքն այն է, ինչ աշակերտը ստեղծում է դասի վերջում՝ բովանդակության յուրացումը ցուցադրելու համար:

Այս փուլի մատուցման եղանակները բազմազան են եղել՝

- Գրավոր
- Բանավոր
- Տիտ

Դասին հետաքրքրություն մտցնելու համար Quizizz գործիքով կազմում եմ հայտորոշիչ հարցաշար և դաս-խաղը հետաքրքրում է բոլորին: Այն ամրապնդում է և կենտրոնացնում ուշադրությունը, զարգացնում հիշողությունը: Խաղն այնքան է ոգևորում մասնակիցներին, որ ցանկանում են նորից խաղալ: Հաջորդ դասերի ընթացքում հաճախ այդ գործիքի օգնությամբ անցած թեմաներն ամրապնդվում են և միավորային գնահատում կատարվում:

Եզրակացություն

Անցկացնելով դասեր 7-րդ դասարանում և ելնելով արդյունքների վերլուծական գնահատականից և եզրակացություններից՝ նկատելի արդյունքներ էր լինում այն դասերին, որի ընթացքում կիրառում էի ուսուցմանն տարբեր մեթոդներ, տարբերակված ուսուցում, ՏՀՏ: (Հավելված) Քանի որ ամառային արձակուրդների պատճառով չկարողացա հետազոտական աշխատանքս գործնականում կիրառել, փորձեցի հիշել այն բաց դասերի օրինակները, որոնց ընթացքում ավելի արդյունավետ մեթոդների օգտագործումից հասել եմ նպատակային վերջնարդյունքի: Դասալսումից արված արձանագրությունները ցույց են տվել, որ սովորողները սիրում են մեթոդների բազմազանություն, անցումային դասեր՝ հագեցած հետաքրքրաշարժ վարժություններով և խնդիրներով: Համագործակցային ուսուցմամբ «Տարբերակված ուսուցումը», «Քարտերով առաջադրանքը», «3 կողպեք 1 բանալի» և տեխնոլոգիաների կիրառումը շատ է հետաքրքրում սովորողներին, որոնք սովորում էին ինքնուրույն պրպտել, իրենց հարցի պատասխանը առաջինը գտնել և արժանանալ գնահատանքի, իսկ հայտորոշիչ թեստերը կազմված ՏՏ գործիքներով ավելի էր գրավում սովորողների հետաքրքրասիրությունը, լինել ուշադիր և դրանով դասը, դասի ընթացքը և վերջնարդյունքը ավելի արդյունավետ էր դարձնում: Մեր դպրոցի համար դժվարությունները նկատելի էին, որովհետև չունեինք սովորողներին հետաքրքրող մեթոդների համար անհրաժեշտ տեխնոլոգիաներ՝ պրոյեկտոր, համակարգիչներ, էլեկտրոնային գրատախտակ: Ուստի, անհրաժեշտ է, որ որոշ դասասենյակներ ՏՏ հագեցվածություն ունենան, որպեսզի օրվա դասի պահանջից ելնելով կարողանանք կիրառել մեթոդների բազմազանություն, որը կբարձրացնի հետաքրքրությունը և կխթանի սովորողներրի ուշադրության զարգացմանը: Արդյունքում, համոզվեցի, որ սովորողներին ավելի հետքաքրքրում է համագործակցային դասերը, որի ընթացքում նաև quizizz գործիքի կիրառմամբ վարժությունները, որոնք մրցակցային իրավիճակ են ստեղծում, լինելու առաջատարներ: Դասի արդյունավետությունը, սովորողների ուշադրության և հետաքրքրասիրության բարձրացումը որոշակի դժվարությունների հաղթահարում է պահանջում, իսկ լուծումների համար՝ անհրաժեշտ

մշտադիտարկումներ, որպեսզի բացահայտվեն ուսուցիչների խնդիրները, և մեթոդական աջակցությունից զատ նաև դպրոցներին ապահովեն ուսումնաօժանդակ և դիդակտիկ պարագաներով, SS-ներով հագեցած՝ հետաքրքիր և մոտիվացնող դասեր անցկացնելու համար:

Այսպիսով, համագործակցային ուսուցման մեթոդներից տարբերակված ուսուցումը, խաղերը հետաքրքիր է սովորողներին, որոնք ներգրավում են դասին սիրով և սպասումով: Ինձ գոհացնում է նման արդյունքը, որովհետև եթե ունեմ նպատակ, ունեմ նաև ակնկալվող արդյունք: իսկ նմանատիպ դասերը, մեթոդների բազմազանության հետ խաղը դարձնելով միջոց ակնկալվող արդյունքիս հասնելու համար, զարգացնում եմ սովորողների՝

- ուշադրությունը
- երեխաների ինքնուրույն աշխատելու ունակությունը
- համագործակցային հմտությունները,
- անձնային որակները
- ուսուցման և ուսումնառության որակը

Գրականության ցանկ

1. Ալբերտ Նալչաջյան, Հոգեբանության հիմունքներ, Երևան 1997/ էջ 113-114/
2. Ուսուցման արդյունավետ հնարներ / Ս. Խաչատրյան.- Եր.: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020.- 9-10 էջ:
3. К.Д. Ушинский – http://www.edufacts.ru/lefabs-508-2.html
4. К.Д. Ушинский – http://www.edufacts.ru/lefabs-508-2.html

ՀԱՎԵԼՎԱԾ


ԴԻՆԱՄԻԿԱ
90
80
70
60
50
40
30
20
10
0
Պատահական դաս 1
Տարբերակված դաս 2
ՏՀՏ դաս 3